

անոնք ալ խառն ի խուռն՝ անհոգութիւնով զրուեցան հոն (1)։ Դեռ աւելին կայ. փոխադրութեան ժամանակ՝ զործին չուտ վերջ տալու համար՝ յիշատակարաններէ մէկ մասը թողուցին եւ մաս մըն ալ աճապարանքով մոռցան յիշեալ Աւգոստինեանց վանքը, որ նոյն 1816 թ. դեկտ. 18-ին տրուած ուրիշ հրովարտակով մը Գեղարուեստից Վարժարանի փոխուեցաւ (2)։ Թողուած կամ մոռցուած յիշատակարաններու մէջ կը գտնուէր նաեւ Լեւոնի տապանաքարը, մինչդեռ վրայի պառկած արձանը փոխադրուած էր Սէն-Դընի։ Իսկ տաքիններ անցնելէ ետք՝ երբ փոխադրուած գերեզմանները կարգի զրուեցան, խզի կատարեալ հանգարտութեամբ՝ պակսած մասերը նորէն չինեցին, կարծելով թէ անհետ կորսուած են անոնք։ Այսպէս՝ Լեւոնի արձանը պառկեցնելու համար բոլորովին նոր տապանաքար մը չինեցին, վրան գրելով սխալաշատ ուրիշ արձանադրութիւն մը, տարբեր այսօրւան տեսնուածէն (3)։

(1) M. Hennin. *Les monuments de l'histoire de France*, ns. Ա. եր. 304 : Տե՛ս նաեւ Guilhermy, *Monographie de l'église royale de Saint-Denis*, եր. 103 :

(2) *Archives du Musée des monuments français*, եր. 440 :

(3) Guilhermy, *Monographie de l'église royale de St.-Denis*, եր. 288 : Այս հեղինակն 1848-ին նկատելով որ Լեւոնի բուն օղակաւոր Գեղարուեստից Վարժարանը կը գտնուի, իր գրքին մէջ յոյս յայտնած է միացած տեսնել զայն արձանին հետ : Տասն տարի առաջ՝ ձեռք բերած մասնաւոր արձանագրութիւններով ու պատճենական հրամանագրերով՝ քե՛ս անձամբ խուզարկեցի Գեղարուեստից Վարժարանի պահեստն ու Սէն-Դընիի պաշարանին ներկայարկի բոլոր օղակաւորները, եւ քե՛ս նոյն Գեղարուեստից Վարժարանի համակրելի մասնաւորաւորացեալ՝ այ. Camille Enlart գնահատելի հոգածութիւնով մը փնտրութեամբ քան ինձ համար. բայց ի գուր : Ահաւասիկ այս մասին այ. Անլարի ինձ գրած պատասխանը .

ÉCOLE NATIONALE & SPÉCIALE

Paris, le 2 juin 1898

DES
BEAUX-ARTS

BIBLIOTHÈQUE

Cher Monsieur,

Je me suis livré sur votre demande à des recherches dans les archives et collections de l'École des Beaux-Arts pour trouver quelque trace matérielle ou écrite